

ԱՐԵՎՍՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ Երկուշաբթի, 25 Փետրուարի, 2008

Հայաստանի նախագահական ընտրութիւնների հետ կապուած շարունակուած է ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի Հանրային կապի Յանձնախմբի կազմակերպած հեռուստատեսային ծրագիրը, որի ընթացքում տեղեկութիւններ են տրուած եւ վերլուծութիւններ կատարուած հայրենիքում տեղի ունեցող իրադարձութիւնների վերաբերեալ: Սոյն հեռուստածրագիրը պատկերասփռուած է Չորեքշաբթի օրերը, Հորիզոն հեռուստակայանից, երեկոյեան ժամը 9-ից – 10-ը:



ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի գործադիր տնօրէն Անդրանիկ Քիզիրեանը եւ Համայնքային կապերի հարցերով պատասխանատու Հայկ Յովսէփեանը Կիրակի Փետրուարի 17-ին այցելել են Արիզոնա եւ գեկուցական հանդիպումներ ունեցել տեղի հայ համայնքի անդամների հետ, որոնց իրագել են դարձրել այն վերջին զարգացումների մասին, որոնք կապուած են Հայոց Ցեղասպանութեան ճանաչման թիւ 106 բանաձեւի, Հայաստանին եւ Արցախին տրամադրուող ամերիկեան օգնութեան եւ Միացեալ Նահանգների նախագահական ընտրութիւնների ու թեկնածուների հետ: Սոյն հանդիպումը մաս է կազմում Հայ Դատի Յանձնախմբի յատուկ ծրագրին, որի նպատակն է համապարփակ տեղեկութիւններ հաղորդել ամերիկահայութեանը յուզող հարցերի վերաբերեալ, որպէսզի հայկական համայնքները կարողանան ճիշտ կողմնորոշուել եւ նեցուկ կանգնել Հայ Դատի Յանձնախմբի աշխատանքներին: «Այս հանդիպումները կարելոր տեղեկութիւններ են տրամադրում տեղացի հայ գործիչներին», - ասել է Անդրանիկ Քիզիրեանն ու աւելացրել, - «Խիստ էական է, որ ամերիկահայ համայնքները քայլ պահեն այն հարցերի հետ, որոնք առնչուած են Հայաստանին ու Ափիւռքին, սկսած Հայոց Ցեղասպանութեան ճանաչման աշխատանքներից ընդհուպ մինչեւ Հայաստանին ամերիկեան օգնութեան տրամադրման իրագելութիւնը, Արցախի ինքնորոշման իրաւունքի պաշտպանութիւնը եւ ամերիկեան նախագահական ընտրութիւնների գործընթացը: Հայ Դատի Յանձնախումբը մնում է այս հարցերի կարգաւորման առաջնային դիրքում»: Նշենք, որ հանդիպման ընթացքում ներկաները հարցեր են ուղղել Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի գեկուցաբերներին, ստանալով համապարփակ պատասխաններ:



Նոյնանման այցելութիւններ եւ հանդիպումներ են տեղի ունեցել նաեւ Կալիֆորնիայի Ֆրեզնո եւ Սան Դիագո քաղաքներում, ուր տեղի հայութեան հետ հանդիպումներ է ունեցել ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի ատենապետ Ռաֆֆի Համբարեանը: Հանդիպումների ընթացքում հայ համայնքի ներկայացուցիչները իրենց զօրակցութիւնն ու աջակցութիւնը յայտնել Հայ Դատի Յանձնախմբի բոլոր ծրագրերի ու աշխատանքների նկատմամբ



Շաբաթ, Փետրուարի 9-ի երեկոյեան ժամը 7-ին, Սան Ֆրանցիսկոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում տեղի է ունեցել յիշատակութեան երեկոյ նուիրուած Խրիմեան Հայրիկի վախճանման 100-ամեակին: Միջոցառմանը ելոյթ է ունեցել Կիլիկեան թեմի երիտասարդ ու տաղանդաշատ միաբաններից, Պարթեւ վրդ. Կիւլիւմեանը, որը հանգամանօրէն անդրադարձել է Խրիմեան Հայրիկի աշխարհիկ, եկեղեցական ու յեղափոխական խիզախ ու ալեկոծ կեանքին ու գործունէութեանը:



«Համազգային» հայ կրթական ու մշակութային ընկերակցութեան Արեւմտեան Ամերիկայի Շրջանային վարչութեան կազմակերպութեամբ Հինգշաբթի, Փետրուարի 7-ի երեկոյեան ժամը

7:30ին, Յուլիվուդի Աք. Կարապետ Յայաստանեայց եկեղեցւոյ «Կարապետեան» սրահում տեղի է ունեցել դրամահաւաք Յալէպի Յայագիտական հիմնարկի օգտին: Միջոցառմանը ներկայ են եղել շուրջ 100 հրաւիրեալներ, որոնց թւում Յ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական կոմիտէի ներկայացուցիչները, Յալէպի «Քարէն Եփփէ» ճեմարանի Լոս Անջելոսի ընկերակցութեան վարչական կազմը, «Ալէք Փիլիպոս» վարժարանի հալէպցի ուսուցիչ-ուսուցչուհիները: Յանդիսութեանը ելոյթ է ունեցել «Յամազգային»ի Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական վարչութեան ատենապետ Վահէ Եագուպեանը, որն անդրադառնալով Յալէպի Յայագիտական հիմնարկի կրթական բեղուն գործունէութեանը, նաեւ յիշել է, որ 2008 ընթացիկ թուականը զուգարկապէս է «Յամազգային»ի հիմնադրութեան 80-ամեակին եւ այս առիթով վարչութիւնը ծրագրում է զանազան նախաձեռնութիւններով յիշատակել պատմական այս թուականը: Նշենք, որ միջոցառման ընթացքում հանգանակուել է աւելի քան 10,000 դոլար: Գործադրուել է նաեւ զեղարուեստական ծրագիր:

**Այս լուրերը տրամադրուած են
ՅՅԴ Արեւմտեան Ամերիկայի
Կենտրոնական Կոմիտէի
Յանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467**

**Այս լուրերը տրամադրուելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել:**